բունքն տրամաբաշխեալ են զձայնս եօ-
թեցն կլիմայից մարդկանց բնակեցե-
լոց բարուցն բնութեց, թէ յոր կլիմայ-
ից բնակեցելքն յորպիսի ձայնից հա-
ճեցեալ բերկրին. կամ որպիսի ձայն
յերգ արկելոց է նց.

Հարց։ Արեւմն առաջին կլիմայի բնա-
կեալքն յորպիսի ձայնիցն ցնծացեալ
բերկրին.

Պատ. Յառաջին կլիմայի (որոյ խսկ ասի
ԽԿՆԻԴ ԽԿԿԽՆ) բնակեալքն, են սեւադեմ.
եւ բնութիւքն ասէ մեղմ՝ եւ չորային.
զձայնիցն ՚ի նոյն բնութեն եղելսն խընդ-
րեն. եւ է նոյնն արագ. եւ յոր ձայնի զը-
ատնիցի նոյնն, նոքա ՚ի նոյնոյ հաճեցեալ
բերկրին ՚ի ձայնէն։ Երկրորդին՝ ասի
ԽԿՆԻԴ ատնի, եւ ՚ի նոյն բնակեալքն վերոյ
ասացեալ ցեղիցն ասէ մօտ է. բնութեք
եւս են մեղմ ու չորային. նց երգելն է
ասէ փի-կեահն եւ այլ նմանք։ Երրորդին,
ԽԿՆԻԴ ասլիա, եւ խնդրեն՝ զոփահանն։
Չորրորդին, ԽԿՆԻԴ տապիա. եւ խնդրեն.
քահանէ։ Հինգերորդին, ԽԿՆԻԴ խաճա. եւ

խնդրեն՝ տառք։ Վեցերորդին, եփլէփ տափխա։ Եօթներորդին, ատղէ և այլն։ Յաղագս կլիմայից՝ ձայնիցն առ առեն։ Թէ յերաժշտաց՝ գիտնոցն եղեալ են։

Հարց։ Ո՞րք են հարկաւոր գիտելիք ունել երաժշտութեան։

Պատ։ Ունել այլ ևս հարկաւոր գիտելիք ոմանք, որք իւր կանոնադրեցեալք են ՚ի քաջահռչակ՝ և բանիբուն երաժշտացն․ զի ոչ զբանիւն մասունս, որք ձայնին արտաբերին․ զորս քաջայայտօրէն խուզէ քաջարուեստ երաժիշտն, թէ սուղ է, կամ երկար, կամ եռամանակ․ ոչ քերթօղք, զբնութիւն քննեն զձայնից։

Հարց։ Մի՞թէ երաժիշտն քերթողաբա՞ր վերաքննէ զբանն։

Պատ։ Ո՛չ․ զի երաժշտական հմուտն քննէ ՚ի վերայ շարունակ քանակին, այս է քնարին․ որ փայտն ՚ի բաղում մասանց շարայօդեցեալ․ որ զտառօրոշ թիւ աղեցն ՚ի շարունակին մակադրէ ՚ի թիւ, թէ որն ՚ի նոցանէ է սուր, կամ բութ,



զի

զե՛ր, և բամբ, սուր, կամ երկա՛ր, թոյլ
և պինդ. և թէ որչափ պարտ է և այլն։
Ս՞ զի՞ կշռադատել մերախտուզէ, թէ
ո՞ր զկէս ձայնն ունի. որչափ զերկպա_
տիկն. ո՞ր զկիսաբոլորն. ո՞ր զմակերևոյթն.
և ո՞ր զմակերպաբերականն. և առնել համա
զէ զձևոյն լարիցն առ մի միաբանութի,
թէ մի՛ ուք 'ի նուագանէ խոժոռաբար հըն
չեսցէ ձայն, որ առնէ զներդաշնակա
ւոր ձայնն քաղցրաձայնօղ նուագարանին՝
աներաժշտագոյն, որ ըստ խմաստոյն.
և ըստ այսմ բանի Ձէ յորժամ երգիչն
զմատունսն ձգէ 'ի նուագարանն, յայն
ժամ տեսանի զարմանալի խրախունին՝
և երաժշտականն։ Իսկ թողեալ զան_
ցեալս, զապառնիսն օրինակ առ մեզ
բերեալ ասեմք, թէ երաժշտականն դի
տութիւն, դիւրին է 'ի մանկացուցիս մա_
սանց ուսումնականին. զի ունի քնարն
լարեաք զարդարեցեալ 'ի գիրկս, թելն՝
'ի քնարս, ձայնն՝ 'ի բերանն, եղանակն՝
'ի գործիսն և այլն. ահա այսքիկ արար
մունքս, և այլք, են հարկաւոր գիտե



լեաց

լէքն, Ը որովք պարունակին և այլքն:
Ո Հարկաւոր գիտելիսն՝ երաժշտութե.
պարտ եւս է գիտել՝ յերգեցողութե.
Հարց: Ո՛ ինչ է ուսումն երաժշտական:

Պատ: Ա՛յն ճարտարութի իմն, որով գերահռչակին յերաժշտաց ըներ չափաբերականն ըղձան իւրըթէ կշռել՝ ծիսով նորին 'ի քանակին բերեն յերգս երաժշտականս. և նովաւ լինի երգն Ը արարողութեն երաժշտօրէն երգելի:

Հարց: Ա՛մէն քանանչորս են:

Պատ: Քանանչորս, որ ըստ յունաց ֆէօսէլէ'սոլիս, յաղագս քանանչորից ժամուցն. որով և եղանակք ենթադասին 'ի չափ՝ և 'ի կշիռ բերելով:

Հարց: Ո՛ ինչ է երգն եղանակական:

Պատ: Ա՛յն եղանակաւ երգեցել չարամանութի ըստ ընդ գովասանութե:

Հարց: Ո՛ ինչ է եղանակին:

Պատ: Ա՛յն արհեստաւոր ճշգութն երգոց կամ ձև ճշմանց:

Հարց: Ո՞րեմն պարտ է արհեստականս


մէր

վերբերգել զերգս եղանակաց։
Պատ. Նայո՛ զի այն է քաջավարժ՝ և բանիբուն երաժշտականն ըղձալի ներհմտութի՛, որ լինի ՚ի ձեռն ուսուցից. որք են խրթէ խորհրդաւոր տեսութե՟ ճառեցեալ ՚ի մեծ Ի՟ ժամուցն և այլոց. զորս ծածկահարութե՟ յայտնեն ըստ

այսմ տատանաւորի։

փի°ն դէ́ ։ դէ° ։ փին՛ ուսուլ են չափ.
ձայնիւ կշռէ՛ հիմնացեալ ափ։
Տաղ։ Ո՛ լինչ. և մրգխի լինչ. և մրգլի

ամ է տեսութե՟։

Պատ. Ն՛ արհեստ. և գրով պարփակեցեալ արհեստ. ոմանց բաղումն, և ոմանց սակաւ ունին պարփակումն. զորս տեսցես ըստ այսմ յեղանակի գրութեն.
ըէյ՝ ըէ° ըէ՛ ըէ́յ ըէյ՝ ըէ ըէ ըէ՝ ըէյ ըէ՜

ըէ° ըէ՛ ըէ° ըէ՛.

Երկրորդն ներկու՝ գրով պարփակեալ.
հիհուպէր յուսուուլին՝ է եղրափակեալ։
ըէ° ըէ՛ ըէ° ըէ ըէ́յ ըէ՝ ըէ́յ ըէյ՝ ըէ ըէ°

ըէ՛ ըէ՜յ ըէ́յ։

Եւ երկոտասանքն՝ գրով մա ըէ.



և

և ըստ երգչացն՝ էձայն ա սի:
րէյ րէյ՝ րէ րէ րէ՝ րէյ րէ՝ րի րէ՛ րի
րէ՛:
Սա ութնևտասան տաւիղն է.
ըստ եղանակին՝ փափուկ է:
րէյ րէյ րէ րէյ րէ րէ րէյ րէ՝ րի րէ՛
րի րէ՛:
Նուրբքումբք տասամբք՝ պարփակեալ.
ուէվրէ ոէպէր՝ է՛ յորջոր ջեալ:
րէյ րէ՝ րէյ րէ՝ րէյ րէյ րէ՝ րէյ րէյ
րէ րի րէ՛ րի րէ՛:
Տաւիղն յունաց՝ սա փակեալ է.
և պէրէվըրն՝ տասցեալ է:
րէյ րէյ րէ րէյ րէ րի րէ՛ րի րէ՛.
Խաղիցն յունաց՝ ունի սև ղի.
Երկու մեկլին՝ փխաչէ ա սի.
րէյ րէյ րէյ րէյ րէյ րէ րի րէ՛ րի րէ՛:
Սա ըստ հողմոցն՝ համաձայն է՝
ըստ փոխել չէն.
մեշտասանեալք՝ գըրով փա կի՝
Քերէն ...:
րէյ րի րէ՛ րէյ րէ՝ րի րէ՛ րի րէ՛ րէյ րէ
րի րէ՛ րի րէ՛:



Սհա

Սհմ յորաբարդ՝ ձայնից նըմա նի.
տեսուն սոյն սա՝ ուսուշ հէզէ ձէ:

րէ՛ րէ՛ րէ՛ րէ՛ րէյ րէ՛ րէյ.

Բոտ տասնաղեայ՝ .քնարին ա սէր.
Եղանակն է՝ շարժէ է փէր:

րէյ րէ՛ րէ՛ րէյ րէ՛ րէ՛ րէ՛ րէ՛ րէյ րէ՛ րէ՛
րէյ րէ րէ րէյ րէյ րէ՛ րէ՛ րէ՛ րէ՛ րէ՛:

Խրեւք տատամք՝ գրոմ է.
Եղանակս այս՝ րէֆ՛ն է:

րէյ րէյ րէ՛ րէյ րէ՛ րէ՛:

Բ°սակենդանակերպից՝ խոկ մանասման.
Եղանակն՝ փէֆէ րէ ձոն:

րէյ րէ՛ րէ՛ րէյ րէ՛ րէ՛:

Բ°տո ութից ձայնից՝ սա և մա րէ.
Եղանակին՝ սփեռն ա սէ.

րէյ րէ՛ րէ՛ րէյ րէ՛.

Զայնաւորաց՝ տառեցն յա րէ.
րստ եղանակին՝ կաղ սէմա է:

րէյ րէ՛ րէ՛ րէյ րէ՛.

Նամր և թեթև՝ սէմա է.
աշխ յայանի՝ տեսս նի:

2°1′1°2′1′.

Սահ սրմ՝ սէնչէն սէ ձա:



րէյ

րէ՛յ րէ րէ՝ րէ՛յ րէ րէ՝ րէ՛յ րէ՞ րէ՛ րէ՛յ
րէ րէ՝ րէ՛յ րէ՞ րէ՛ րէ՛յ րէ՛յ րէ՝ րէ՞ րէ՛
րէ՛յ րէ՝ րէ՞ րէ՛ րէ՛յ րէ՛ րէ՞ րէ՛ րէ՞ րէ:

Րաս թերըքբլղացն՝ յօրինեալ է․
Ղուրղն հաֆէֆ՝ ասացեալ է:

Րէ՛յ րէ՛ րէ՝ րէ՛յ րէ՛ րէ՝ րէ՞ րէ՛ րէ՛յ րէ
րէ րէ՛յ րէ րէ՛յ րէ՛․ Րէ՛յ րէ՞ րէ՛ րէ՛յ րէ
րէ՛յ րէ՞ րէ՛ րէ՞ րէ րէ՛յ րէ՞ րէ րէ՞ րէ՛ րէ՛յ
րէ րէ՛յ րէ՛յ րէ՛յ րէ՞ րէ՛ րէ՞ րէ՝ րէ՛յ րէ՞ րէ՛
րէ՛յ րէ՛յ րէ րէ՞ րէ րէ՛յ րէ րէ՞ րէ րէ՛յ րէ՝
րէ՞ րէ՛ րէ՞ րէ՝ րէ՛յ րէ րէ՝ րէ՛յ րէ րէ՝ րէ՛յ
րէ րէ՞ րէ րէ՛յ րէ՛ րէ՞ րէ՛ րէ՞ րէ:

Ձ՞մդ տաուխքն՝ ղուրղն Փէրն՝ յայտ լինին․
ջան և գան՝ ցուցանեն՝ ըղձականն:

Րէ՛յ րէ՛յ րէ րէ՛յ րէ՛ րէ՞ րէ՛ րէ՞ րէ:

Ամ շորեքտասան՝ գրով պարփակեալ․
որ քատ ուսուցին՝ է նէյ փէնըր լեալ:

Րէ՛յ րէ՛յ րէ՛ րէ՛յ րէ՛յ րէ՛ րէ՛ րէ՛յ րէ՛ րէ՞
րէ՛ րէ՞ րէ:

Նորկու երկոտն՝ տասխեք ներգործի․
մուխանձքս ձայնիւ՝ ուսու յորջորջի․

Րէ՛յ րէ՛յ րէ՛ րէ՛յ րէ՛ րէ՞ րէ՛ րէ՞ րէ՛ րէ՛յ
րէ՛յ րէ րէ րէ՝ րէ՛յ րէ՛ րէ՞ րէ՛ րէ՞ րէ րէ՛յ



րէ

րի՞ րէ՛ րէ՛յ րէ՛յ րէ րէ րէ՝ րէ՛յ րէ՜ րի՞ րէ՛
րի՞ րէ՛ րէ՛յ րէ՛յ րէ րէ՛յ րէ՛յ րէ՛ րէ՛ րէ՛յ րէ՜
րի՞ րէ՛ րի՞ րէ՛ րէ՛յ րէ՛ րէ՛յ րէ՛ րէ՛յ րէ՛յ
րէ՝ րէ՛յ րէ՛յ րէ՜ րի՞ րէ՛ րի՞ րէ՛:

Այս էղադրօն՝ ո՞ յուռնակա | նի.
տառիւք փակեալ՝ չէնճէր ա | մի:
Տիւօէ+ Փառաէ՝ տէվէրէ էտ | ղէր.
Ծնողք պէրզահն՝ լէնէն չէն | ճէր:
Տէվէր +էպէրն՝ ըէտ՞ պէրէվըզ | նէն.
լինիս ղուրպէյն՝ ըստ ուսու | լին:
Աշխու հաֆէֆն՝ է՛ ՚ի տե | ղի.
ուսուլ արհեստ՝ մի հավէս | էն:
Բէ՛յ րէ՛ ձայնեն՝ երկ մէկ ա | սա.
րի՞ րէ՛ րի՞ րէ՛ն՝ ձայնըզ սաա | տեմ.
Նուէ՛ երգէնէ՝ ըըքէշկըր | թեմ.
և զմինացեալսն՝ այսպէս ի | մն:

Հարց: Օ՞ րն է յօրինուած թէրքի
պայց:

Պատ: Ս՛այնպէս որ ՚ի վերն ասացաք, թէ զքաւանն ջօրսն յերկուս բաժանեցին զմանն ատարն և այլն. բայց թէ ոք զառաջինն զչորս բոլն ձայնս, զերկրորդ սան հաւասն և զեօթն աղաղէշս ուսանի



բաս

ըստ կատարելոյ տեսութեան, ընդ որովք և
զինչ ······ն · զայս կարի դիւրագոյն
կերպիւ կարողանիցի յօրինել. զի սոցա
ամբարձեալ են նոքա. և որոց հիմն է՛ մի և
նոյն ձայն, բայց ՚ի ձեռն քաջարուեստ
հմտացելոցն և եթ այլայլին ։

Հարց։ Հիմն մի և նոյն գոլով որպէս լի-
նին այլ և այլ ։

Պատ։ Որպէս բացայայտօրէն տեսանի ահա
՚ի ձայնի մերում. որ ՚ի միում ձայնի
զանազանին եղանակք բազումք. որպէս ՚ի
շարականացի անդ՝ որ նախ յառաջին
ձայնի այլ կերպիւ է ՚ի յարութեան կանո-
նի Այսօր յարեաւն. այսօր զատիկն.
որ եկիր ՚ի փրկութիւն և այլք։ Այլ
կերպիւ երգի ՚ի խաչի կանոնին ՚ի նո-
րահրաշ նաւակատիսն. այլ կերպիւ ե-
րանելի աստուածասէր մեր դշխոյն և այլք.
Որպէս ասէ և ս մեկնիչն ներգինացոյն,
թէ ՚ի մի ձայնումն զանազան գոն եղա-
նակք որպէս ՚ի դձ. այլ է այն, որ ասի
Առաքելոյ աղաւնոյ. և այլ է այն, որ ՚ի
վեր բղխեալ դասադանին. և այլ է որ


երկ

երկնայնոց հոգեղինացն. նոր սիօն ծը-
նեալն և այլք. ուրեմն պարտ է գիտել,
թէ բազում շարունակք ձայնս ՚ի վ͞ր
հիման միոյ այլ և այլ կերպիւ. զի ս͞բ
հարքն մեր յոգունս են ընթացեալ ՚ի
այն շաւիղս, թէ ՚ի շարականս, թէ ՚ի
մեղեդիս և թէ ՚ի տաղս. թերքիպաց
հիմունքն՝ են երկոտասան. ընդ եօթն-
և չորիւք՝ լինին համաձայն։

Հարց։ Ո՛ր ինչ է շարամանութ͞ի ձայ-
նիցն։

Պատ։ Ի՛ յօրինումն ներդաշնակաւոր
ձայնից քաղցրանուագ եղելն, որ ես
է երաժշտականութ͞ե լուծմն՝ և դա-
դաւթ հնարագիտութ͞են. զի սա է տե-
սանել զքաղաքանութ͞ին հնչմանց. ըղ-
ձափ՝ և զքանակ ունելն նորին՝ զորմէ-
տսէ ներդինացին դաւիթ։

Հարց։ Ո՛ր ինչ է եղամանակն։

Պատ։ Եղամանակն ը͞ս երաժշտաց, է՛
եկաձայն կամ միաձայն. որ ըստ դերա-
հրաշակ բանաստեղծիցն թարց ելևէջ-
ատնելոյ ձայն իմն է. զի ՚ի յեղամանակն,

Ի

չէ

շեշտաձայն, պարոյկաձայն ՚ի չ գոյ. այլ է՛ միաձայն՝ որ Է պարսից առաջի վաշխի, և ըստ յունացն՝ խաօն, այս է սկիզբն և դուռն ընդհանուր ձայնից.

Հարց. Ո՞ր է երկամանակն, եռամանակն, քառամանակն և այլն.

Պատ. Ըստ կարգի խուրոցն սկզբնառուեց յատուկձայնացն սկզբնաւորեցեալ ձայնքն, որք Է նորօք դարձադարձ առեալ՝ և ըստ արհեստիցն խուրոց՝ ձայնելով զեղանակս, լուսացուցանեն ՚ի յըն թացս երաժշտականութեն.

Հարց. Ո՞յք էին ՚ի բնէ տաղերգուքն մեր.

Պատ. Սարեկացի սբ վարդապետն, սբն Ներսէս շնորհալի, Ռաքէլ վարդապետն քեռորդի սբյն Գրիգորի տաթևացւոյն, Մատթէոս վարդապետն, Գրիգոր վարդապետն Ծերենց, Խաչատուր վարդապետն կեչառեցի և այլք.

Հարց. Ո՞յք էին երգեցողք զեղանակաւոր երգս շարականաց.

Մեծն մեսրոպ, Սբն ՚ի Սահակ. Մեծն

վարդան. Մովսէս քերթօղն. Անանիայ
շիրակացին. Յոհան օձնեցին. Յոհան
մանդակունին. Պետրոս գետադարձն.
Գրիգոր մագիստրոսն. Գրիգոր վը
վկայասէրն. Գրիգոր սկեւռացին, Ս
տեփաննոս սիւնեցին. Ներսէս Շնոր
հալին և յոգնաշխատ Հայրապետն մեր
որ եղև իշխան տաղաչափից և այլքն:
Սէ Հայրապետք՝ և վարդապետք՝ քաջ
չափաբանք. որք հեղինակք՝ մեզ իսկ
եղեն՝ լաւ երգաբանք.

Հարց. Ո՞ ինչ է եղանակագրութիւն.

Պատ: Է՛ երգագրութի:

Հարց: Ո՞ ինչ է երգագրութիւն:

Պատ: Է՛ քաջայայտ գիտութի՝ իմն, որ
ուսուցանէ վերագրել զեղանակս ձայ
նից.

Հարց: Որպիսի ինչ է երգագրութիւն:

Պատ: Է՛ պար առեալ ստորագրութի,
որ և զբանն երգեցողացն, կամ զձայնն
եղանակացն նոցին ՚ի մէջ առնու ՚ի յե
ղանակն երգոցն. որ ՚ի ձեռն քաջաքաջ
գիտութեն ընդհանուր կանոնաց երա
ժշտականութեն:

Հարց. Երաժշտութիւն, որ անմարմին բան արուեստ գոլով՝ որպիսի կեր–պիւ սեղմի 'ի լոյսն բնականի։

Պատ. Անմարմինն բան արուեստն ձե–ւոք լինի և փչմամբ. բայց ձայնն 'ի բե–րանոյ մարդոյն ելանելով հագներգա–բար, և խազքն ունելով յինքեանս մարմին՝ և անմարմին, և անդրադար–ձաբար. յորժամ ելանի հագագ շըն–չոյն, յայնժամ նոյն ելումն շնչոյ, թէ թոյլ, թէ ձիգ և թէ միջակ. յարմա–քինս տպաւորելով զձայնն, խիղոյն անցանի երևակայութիւն. Որով քաջայայ–տօրէն ես բացայայտի նոյնն. զոր իբր հայելի օրինակաւ առաջի մեր եդեալ երևակայեմք. որով շարժմամբք երևա–կայութե դրդեալ բնականի լուսոյն՝ վերահօսյն յերևակայեալսն, զոր ընկա–լեալ ախորժագոյն ես նմանութեք յա–ռաջ բերէ։ Ո՛ ի լուսոյն բնականի ընդ–արձակագոյն՝ և բարձրագոյնն վերձա–կեալ պայծառութե քան զզգայութիւնս, որով բազումս մարմնացուցանէ զերգս

եղանակաց՝ որ իբր ոսկի, բեհեզ, գեղմն, դալ, լինին հեղեղեալ ՚ի ձեռն խաչից՝ և Է հանուր աստիճանացն ձայնից.

Հարց. Ո՞վ պարտ է լինել նոյնն.

Պատ. Հարկ է դոլ կարի յոյժ սրամիտ և ուշիմ, արագընթաց բնականաւն լուսով, թէ նուագս ոչ անաւ՝ և արագաթափիչ մտօք արշաւեցեալ հասանիցէ ՚ի կատարումն նկատման բանիցն երգոց.

Հարց. Եթէ երաժիշտ ոք, եղանակաւոր ձայն իմն երգեսցէ. նոյնն որպէս առնլոց եմք ՚ի գիր.

Պատ. Սղխեր արհեստից միոյ է. զի բանն ՚ի միոյ՝ ծնանի և ՚ի հոգւոյ. նոյնպէս շունչն, ՚ի հոգւոյ՝ և ՚ի մարմնոյ. նմանապէս ընդհանուր ձայնից՝ և համայն եղանակաց ծնունդն և լինելութիւն, է յութիցն ձայնաւորաց. Ո որ սրնթաց մտօքդ տես, թէ քանի՞ ձայն ստորէ՝ և բարձր ութից ձայնիցն յեղանակաց. զի եղանակաւոր երգեցմունքն միշտ ելևէջ առեալ վերաձայնի. որով իմն նախ՝ զսկզբունս ասացուա-

ծոց, երկրորդ՝ զառաջին զկոյսն, երրորդ՝
զմիջինն, յետոյ զվերջինն, ջ̃, զ գործակ-
ցեան․ նոյնպէս իմացեալ զհանգամանս՝
կարողանաս երրորդութեն հասանել
գիտութեն․ զի համայն արհեստաւորքն ՚ի
ձեռն ընդհանրին կարեն լինել արհեստ-
աւոր․ որպէս քերթողքն, քերականք
ընդհանուր տեղեկութե՛ն պարծի․
նոյնպէս հռետորքն, տրամախոսքն, թուա-
բանքն, երկրաչափքն, աստեղաբաշխքն և
այլք ՚ի ձեռն ընդհանրին լինին նոյնպէս՝
և ոչ ՚ի ձեռն մասնաւորին։

Արհեստագէտք՝ անդրահրճեցին՝ ՚ի
մերձակայս․ որքան լիցին՝ յենթադրուա-
նէ՝ ՚ի հեռակայս։

Հարց։ Ո՞ինչ է շխեան բանաստեղծա-
կան։

Պատ․ Ա՛յն, թէ ամ̃ տունն տասանա-
ւորի․ արհեստաւոր, մէկզմէն՝ մանեկի,
ջ̃, կշռեցեալ՝ և միկնաբանուէ՛ լինի
յօրինեալ․ որպիսի է այս տառանաւորս։
Լա՛զեա՛, հա՛րան՝ ա՛նմա՛հի՛ն․ երկնա՛-
ւո՛ր՝ ա՛րքա՛յի՛ն․ ա՛ռա՛գա՛ստ՝ ա՛նձա՛-
ռի՛ն․

ուի՛ն · մարիամ՝ լուսածի՛ն։

Ահա այն երգս, է՛ նախապէս վեցաւ-նեայ տասնաւոր · և յեղանակին, է՛ ԹԷ-րեփօրէ ասացելոյն · որ և վարի մանկա-կրկնակ Փախկլուն վէջնին · և մեկնա-բանութիւն ընդ արհեստաւոր յօրինու-մամբ յայտնապ՝ երևի · զի է շարագրե-ցեալ 'ի մէջ հայոց։

Հարց։ Ո՛ ինչ է դասնելին երաժշտական բանաստեղծիցն։

Պատ. Նոյնն և է տասնաւորաց անդամոց վերջքն միմեանց նման՝ և յարմար յանգիլն · որպիսի է տասնա-ւորս այս ասացեալ 'ի Շնորհալւոյ մեր հայրապետէն, որ յաղագս եկեղեցւոյ։

Աէ է տաճար՝ տէրունա կան.
եկեղեցի՝ ածա կան.
զոր մարգարէքն՝ յառաջ տե սան.
առաքելոց՝ քարոզե ցան։
Դաւիթ երգէր՝ զսաղմնա րան.
լեառն և խորան՝ տէրունա կան.
Գրիգոր տեսեալ՝ պարթևա կան.
Տրդատ շինեաց՝ արքունա կան։



Ահա

Նհմ վերջին վանկամն միմեանց է ոչ անյարմար · որ ըստ պարսից, ասի Ռա- նէյ · Եւ և վերաբերի առ միւզարի ասացեալ եղանակն մէֆախյլուն ֆա- իլաթուն և այլն · և վերերգի 'ի յեղա- նակի վարդավառի տաղի այսօր ցըն- ծային:

Հարց: Ո՞ ինչ է ընդլուն ասացեալ ձևն երաժշտականն:

Պատ: Բառեւսն ասի տաղից, որոց առա- ջի տողքն երրորդին անհանգէտ լինի · որպիսի է տասնաւորս այս ասացեալ յառաքել վարդապետ բաղիշեցւոյ, որոց գլխատառքն յայտարանեն զանուն մեր վարդապետին, որ ասացեալ է յաղագս մերյն յակոբայ:

Նշման միածնին · Հօրն երկնաւորին ·
ընտրեալ յերկրէ ՍԷ Յա կոչ·
քրոբէ մարմնոյին:
Ոսկին վերընթացի · կամաւ յօժարեցի ·
ՍԷ հայրըն հոգւոյ մեր Յա կոչ·
յաղգէն պարթևաց:

Նհմ առ եղանակի յեղանակս մէջ յա-


բու

րուն տաղի դասքն հրեշտականի, որ ըստ
ոտիցն . տակայն կարելի՛ է յայլ իմն
եղանակի վերբերելն:

Հարց. Ո՞ր ինչ է Դաւիթ ասացեալ
ձեւն երաժշտական:

Պատ. Բանի մի կերպ տասնաւորացն
ասի, որ մինչ եօթնիցս ուրեք՝ կամ այլ
ումելի գոլոյն որպիսի է՝ տասնաւորս
այս ասացեալ 'ի գերահռչակ բանաս-
տեղծէ Սբյ Հայրապետէն Շ Նոր-
հալւոյ, որ յաղագս մէցն Հրեշտակա
պետաց:

Զօրք երկնայինն՝ զուարթ նոց.
դասք հրեշտակացն՝ անմարմ նոց.
իշխանութիւնք՝ աթո ռոց.
և տէրութիւնք վեր նոց.
Ս. Հեղանկերպ՝ քերով բէք.
զարմանալի՝ բազմա չեայք.
լուսով փայլեալ՝ պաշտօ նեայք.
հրեշտակապետութք՝ հրեշտա կաց.
Ս. Հոն գլխաւորաւքն զուգանեն, թէ է
'ի վ՞ր հրեշտակացն, զի վերակացու
նոյնն զօրավոր. որպէս 'ի ճնումն գրէին
'ի

՚ի տեղի ջրի՝ այբ. և հիւն։ Նաև եղա
նակի երգս այս ՚ի յեղանակի յարուե
տաղի Պօղոսի հրեշտակին։

Հարց. Ո՛ րինչ է տէրճիհն երաժշտական
ձևոյն։

Պատ. Պուէրճիս երից ստանաւորացն,
կամ հնգիցն և կամ եօթնիցն ասեն, որ
՚ի մէջի հանրիցն տանց կազ խմն լինի
ստանաւորի, որոյ գէրճիս ազէնտ աս
ասեն պարսիկք. ոմ և մեք ունիմք շա
րադրեցեալ ՚ի յօհանիսէ վարդապետէ, որ
յաղագս վերափոխման Տիրամօրն Սէյ
կուսի. որոյ և սգլխատառքն են ՚ի վե
այբ ու բենի. զոր վերբերգեն յեղանա
կի առաջնաձայնակի ծածանի երգոյն։

Ձ՚աւագոյթ՝ փառացըն հօր.
՚ըզեղ վերա՝ փոխեաց այ աօր.
չնորհօք տր՝ Հօգւոյն և Հօր.
մայր մանուէլի Սէ կուս։
Սպօւր և՝ անբիծ ծը նօղ.
միածին՝ որդւոյդ մարմ նով.
Նախնոյն յանցանաց բար ձօղ.
մայր մա"։



Հարց.

Հարց։ Ո՞ր ինչ է չորչէն տասցեալ ձեռն երաժշտական։

Պատ. Ի՛ գովութի՜ն մեզն, որով գովեմք զմեզն զգեղեցկութի՜ն, զարբութի՜ն, զքաջութի՜ն և զայլ առինապխախան. յորմէ ունիմք օրինակ ՚ի մեր ներբողս. Օ՜ նոր հայելոյ տասցեալ, որ յաղագս առաքե լոցն սրբազանից. որ ևս երգի ՚ի յեղանակի վարդավառի տաղի. այսօր ցնծայ յեառն Թաբորի։

Առաքեալք՝ մեծ որ գուոյն.
՚ի ծոցոյ հօր՝ առաքե լոյն.
բանաւոր՝ հօտից հո վիւք.
բանաւորաց՝ պայծառ քա րոզք.
Գեղեցիկ՝ ոտք ընթա ցեալ.
աւետաւորք՝ խաղաղու թե.
դատաւորք՝ խորայե լին.
աթոռակիցք՝ հօր անդրան կին։
Երկոտասան՝ քրդ նախ կար գեալք.
եօթանասուն՝ թի՜ կառն րեալք.
ընտրեալք յառաջ՝ խոկըղեա նէ.
մը և մարոր՝ յորովայ նէ։

Հարց։ Ո՞ր ինչ է մեռ տասցեալ ձեռն երաժշտական։

Պատ. Ո՛չ մի ներս գովելոյն ամի. այլ ունիմք օրինակն ասացեալ ի Գրիգո րէ վրդպտէ ծերենց ասացելոյ. որ յաղագս նորին Գրիգորի ածաբանին. այսպէս:

Գետ հոսեալ՝ ածոյ ին.
յորում հոգւոյն՝ ջուրք լըրա ցան:
Բարբուն բանից՝ ածա բան.
որ նը Գրիգոր՝ հայր սրբա զան:
Ի յադենոյ՝ քոյդ վրաս կօք.
տունկք նոր դրախտես՝ ոստքն ցան:
Գող ընդհանուր՝ երկրի աղ բէլ.
յորմէ բոլոր՝ ազգ սրբեն ցան.

Ո՛հ զկնատառքն յայտնաբանս ցուցա նեն զանուն նոյ վրդպտի յօրինողին. որ եւ երգի յեղանակի այսօր ցնծայ լեառն Թափօրի:

Հարց. Ո՛ ինչ է հետք ասացեալ ձեւն երաժշտական:

Պատ. Ո՛ միոյ նըյ. տառականաւոր բանիւք զտանջանսն, զբաշխութիւն, զձգնութիւն, զարբռութիւն, զմաքրութիւն, զհաստատութիւն, եւ զայլս, գովեն գեղեցիկ շարա



դրու-

գրութե̄ · որոյ օրինակն ունիմք յօրի նեալ 'ի Սբ̄յ հայրապետէն Շնորհա լւոյ այսպէս.

Անմարմնոց՝ ըն հրեղէն   նաց.
մարմնով հաղորդ՝ ո̄ք յոհան   նէս.
Բանին հօր՝ բանի՛ն քա   րոզ:
Մեծի լուսոյն՝ նախատե   սող:
Գարնան գուշակ՝ երկրի մե   րում:
քաղցրախօսիկ՝ ձայն տատրա   կի.
Դրախտին հոգւոյ՝ ա̄ծա   տունկ.
տոոգանօղ՝ ջուր մաքրու   թե.
Սրկնաւորին՝ ճանապար   հի.
յառաջընթաց՝ աւետա   ւոր:

Ահա 'ի վր̄ այբ ու բենի է յօրինեալ. և եղանակի 'ի յեղանակս յարու̄ տա ղի դարձել յայտնի՝ այլանըմանին, որ երգի ըսփահան ձայնին յեղանակի.

Հարց: Ո ի՞նչ է Դրդուէջէ աստղէն ձև երաժշտական.

Պատ: Ս՛ գովասանու̄ մեծամեծ ի րացն, որոյ օրինակն ունիմք 'ի քաջա հռչակ բանաստեղծի հայոց Սրբոյն Շնորհալւոյ 'ի վր̄ ո̄բց մրկրեցն



ը̄

Ը ութբենակական տաղիցն.

Սծոյլին՝ խորոցն ան ձառ·
խորհրդածութք՝ մեր մարգա րէք·
Բանիւ պատմօղք՝ յառաջա գոյն·
զապագայիցն՝ եղելու թիւ·
Գաղտնի գործոցն՝ ած որ գոյն·
տնօրինական՝ մեր խորհրդո գոյն·
Գուշակօղք՝ ամենայ նի·
բազմապատիկ՝ օրինա կօք·
Երևեալ՝ 'ի Ջրոյն մով սէս·
գաւազանաւ՝ զծովըն հեր ձեր·
Օ ծնունդն եսեա՝ ըղկուստ կան·
'ի մորենին՝ անկիզե լի·
Լուսախածին՝ արքայն դա ւիթ·
Հայր ըստ մարմնոյ՝ Տեառն յսի:

Օ սա ասացեալ է Սբ Հայրապետն յոգնաշխատ, և բազմերախտ երաժիշտն քաջահռչակ 'ի մէջ երգասանեաց տաղիցն, որ յերաժշտական երգչացն՝ եղանակս 'ի յեղանակս ոչ արգելեաց՝ վեհն երկրաւորի · նաև դարձեալ յայտնի՝

այլանօրմանի · և այլոցն:

Հարց: Օ՞ինչ է նշնի ասացեալ ձևն

ե

Գիւտ. Ի մի շարադրութե գոլ ոտանաւորին, ի բազում եղանակելոյն ասի ի կերպս. ոմն ոտանաւորս այս ասացեալ ի Գրիգորէ վարդապետէ, որ ըստ խորոյ անուանադրութ տառիցն, յաղագս հրեշտակապետացն այսպս.

| | |
|---|---|
| Գովեստ բերկրա | նաց՝ |
| քաղցրաձայնեալ եք | գեմք. |
| Ձեզ հրեշտակա | պետք՝ |
| և հրեշտակաց գու | մարք: |
| Բաբունք պանծա | լեք՝ |
| և գերադոյն գոյ | եցս. |
| անտեսին տե | սողք՝ |
| և մերձաւորք առ | փոյն: |
| Ի մեզ քաղցրու | թե՟՝ |
| աղաղակեմք նոյ | եւ. |
| և հայցեմք ի | ձէնջ՝ |
| մեզ բարեխօս լե | րուք: |
| Գովեմք ըղբաղձա | լեբդ՝ |
| Ներբողական եր | գով. |
| բարեկամք բա | րեք՝ |
| և մարդասէր հո | գիք: |

Ո՛վ զուարթնոց կա ձայնք՝
և յարարչէն պատ ուեալք·
՚ի նմանէ հայ ցեք՝
մեզ թողութի՟ մե ղայց·
Բախձանից կե նայց՝
ընդ մեզ կցորդ ա ռեք·
զի զփառս երգես ցուք՝
երրորդութեն յա ւէտ։

Ահա երաժշտական արհեստաւոր է
ղանակաւ՝ և քաղցրաձայն երգով ՚ի
յեղանակս յոգունս· նախ՝ եղանակէ
մեղեդի, ՚ի վ̄ր ծննդեան մեղեդւոյն·
Մոգք յարևելից ընծայաբերին· ՚ի
համբարձմանն, Այսօր անդրանիկին·
՚ի Մեծահրաշինն, Նուագեմք հո-
գւոյն նուագս վայելչին· ՚ի հոգւոյ
գալստեանն, Մէ գալստեամբ քո նոր
ծաղկեցաւ երկրին· ՚ի վերափոխմանն,
Այսօր Գաբրիէլն, և բոլոր պարեցէք
եկեղեցւոյն· ՚ի հայրապետացն, ՚ի հան
դէս տօնին· յառաքելոցն, Աւեդակն
արդ·րոյն, Նաւ Պետրոս և Պօղոս քրիս
տոնէից պարծանացն· ՚ի մարտիրոսացն,
Նոր

Նոր ծառոյն կենաց անմահականին .
՚ի կուսանցն , Կենդանի մշկայք կոյսք
իմաստնոցն .՚Ի լուսաւորչին , Սրով
բերկրեց ձայնիւ եղանակովք այսօրն և
այլոց բազմացն։
Նոյնպէս և ՚ի տաղերգութեն խմն . որ ՚ի
յարութեն կանոնս , Կանանցն կանխել
եկլին ՚ի գերեզմանն . որ համբարձմանն ,
որ փոխմանն , որ պահոցն , Ծնդ ՚ի մէջ
գրախտին . որպէս վահանայ գողթնա
ցւոյն , յաղթող զօրութ վերնականա
ցելոյն . որ Հայրապետացն , Րաբունք
պանծալիք որդւոց մարդկան և այլոց
սոյնպիսեացն վերաբերեալ եղանակի
Նեշիտ յորջորջել ձևն երաժշտական։
Հարց . Ո՞ր ինչ է Բեբծեմ ասացել ձևն
երաժշտական ։
Պատ . Ն՛ման , որ զշարադրութիս երա
ժշտօրէն բանի , ՚ի յարապիցն , ՚ի պար
սիցն , կամ ՚ի յունացն՝ և կամ յայլոցն
յիւրն թարգմանեն ՚ի լեզուն , և զայն
՚ի յեղանակն առ բերեն . որպէս են սոքա .
Տօքսա էնիփսիս դիս Թէօ , դէ՝ էքելիս

իրինի էն անթրօբիս էվդօգիա։
Էլ մէճտ ալլահու Փիլ ալէա վօւ ալէլ
արտ էսսէլամ վիւ-էլ-ֆինէաս էլմէսէրրա։
Փառք ՚ի բարձունս այ և յերկիր խա
ղաղութի ՚ի մարդիկ հաճութի։
Ըստ վերինն արաբէրէն. միջինն, յու
նարէն. և վերջինն հայերէն նշանակէ։
Հարց։ Ո՞ր ինչ է նշանակէ ասացեալ ձևն
երաժշտական։
Պատ։ Բանաստեղծական երգադրու
թեան ուրուք, բանաստեղծական եր
գադրութիւն յարմար յօրինումն նման
նմա. որ արարեալ առաւելոյ ՚ի դէմս
բանաստեղծութեան շնորհալւոյ, որ ՚ի
յարութե Տեառն։
Իսկ մեծ մարիամ՝ մագդաղենացին.
եկեալ ՚ի խնդրել՝ զտէրունեան մարմին.
ըզ հրեշտակն նստեալ՝ ՚ի վր վիմին.
և ձայնէր նմա՝ վէ լուք զկենդանին։
Ըստամ եա նէշէրէ կամ պատասխան
տուեալ ոչ վրդպմին ՚ի յոտս՝ և յան
դամն նոյնոյ ասէր այսպէս։
Իսկ մեծ մարիամ՝ մագդաղենացին.

կացեալ արտաքոյ՝ մեր գերեզմանին.
աղի արտասուօք՝ ողբայր զկենդանին.
և տեսեալ զհրեշտակն՝ 'ի գերեզմանին։
Մ. Հմ այսպիսեացն ասի նշնկէ ․ որք
են մոօք, անգամօք, և ոտիւք յարմար՝
և հանդէտ իրերաց. և եղանակի 'ի յե-
ղանակս յարութե տաղի Նոկեալ մա-
րիամ մագդաղենացւոյն։

Հարց. Ո՞ր ինչ է Թուլչեշղուհ ձայն երա-
ժշտական.

Պատ. Նա՛յն երգագրութիւն բանաս-
տեղծական, որոյ գլխատառքն շաղկա-
պեն զանունն ուրուք. որպիսի է Նոր
ծաղիկն, նոր իմն աւետեացն. յորոց է-
լանի անունն մեր հայրապետին ներսիսի.

Հարց. Ո՞ր ինչ է Թուսնէշուխ ասացեալ
ձայն երաժշտական։

Պատ. Նա՛յն ոտանաւորն, որոյ երկրոր-
դումն լինի անհանգէտ, որ և կամ յար-
մար ոտիւք, կամ ո՛չ. զորմէ և ունիմք
օրինակ 'ի մէջ Հարցն յօրինեցեալ գե-
ղեցիկ չափաբերութ․ մանաւանդ ու-
նիմք 'ի մէջն ներսիսի. որոյ առաջի տողն


եօթ

եօթնավանկ, և երկրորդն՝ ութ ոտնեայ. որև յորում ոտն է ասացեալ. ՚ի յերգս

Նոր ծաղիկ պայծառին:

Յարուցեալ՝ երրորդ ա  ւուր.
առաւօտուն՝ ձայնեաց հրեշ  տակն:
Նորահրաշ՝ լոյսն ծա  գեաց.
աւետաւորն՝ մեր յարու  թեան:
Շնորհատուն՝ արարա  ծոց.
երևեցաւ՝ խընկաբե  րիցն:
Ա՛յ կանայք՝ փութացա  րուք.
և պատմեցէք՝ աշակեր  տացն:

Գտանին այլևս ձևք երաժշտականք, որք ըստ պարսիցն. մախլաս, տախշիս, բաշմաքլը, գոֆիէ, Սեմայի, տէրբայի, տէշխիշխուտ, էջէռնամ, լոռչէղ և այլք:

Մախլաս, տասնաւորի առաջին տողին առ ասի, յորում սկիզբն անուան այլքն. Գոշխչէս, վերջ տողիցն ասի երգոյն բանաստեղծութեան. որպէս ասէ մեր հայրիկանն:

Թէ արժանի՝ առնէք ինձ  ման.
զիս ըղձերսէս՝ անձն անար  ժան.

կամ այսպէս,

Ա՛ հոգևոր՝ բանդս պէս  պէս.



տ

որոյ նըշխարն՝ եղև նոր ակն։
Խաղերգիչն, է այն, որ նախ զբանաստեղ-ծի անուանն յիշէ՝ յետոյ զայլս, այսպէս․
Զնորա յիշել մի՛ դանդաղ ղէք․
որ զնուարձանայ՝ քըղ կայդոյ ակկ։
կամ այսպէս,
Ներսէս ծառայ՝ Տէ՛ռն մեր բին․
Հայցեմ առաւօտ՝ շնորհեդ կըր կին։
Գաղփիէ ասացեալն է այն, թէ ոստանա-ւորի վերջն որ ասաւ մի յանգի, երկ-րորդ՝ տուն և նոյնն պարտ է վերա-բերել․ որպիսի է ասացեալ բանքն մեծ Հայրապետին Ներսիսի շնորհալւոյն։
Քաղանեցին՝ Տէր գոյժ․
քրիստոնէից գուլով ան ոյժ․
ընտրեալ դըլուխ գոյր հայկազ նը․
դրխորիսն պալհաւու նը․
եղբայր երէց՝ գող կարդան դէ․
իմ ներսէսի՝ որ գայս եր դէ։
Ահա՛ ի վերջն գող ժէից, եթից՝ և էրցն գաղփիէ ասեն․ և այլոցն չէփիփ․ սեա՝ որոյոր ձեւք գոն ի պարսիկս, դան անպայկաս ի դերափայլ շարադրու-


թեն

Թէն ո՛ւր հայրապետին ներբոխի·

Մէծէհն, է այն ոտանաւոր, որոյ վերջին անդամն լինի անհանգէտ այլոցն անդամոց· որոյ օրինակն ունիմք յառաջել վրդպտէն քեռ որդէ ո՛ւյն Գրիգորի Տաթեւացւոյ այսպէս·

Սահծին՝ բարեաց պտո   ճառ·
ո՛ւ անարատ՝ յերկրի դը   տար·
մեր արարչին՝ տուն եւ սա   ճար·
ամենօրհնեալ՝ կոյս մօրի   ամ։

Գուէղծէհն է՝ յորժամ բաւիք յարդարել զոտանաւորն· որ է այսպիսի օրինակաւ·

Ն՞Հգերագանց՝ մայր՝ մայր մարմնացելոյն· անարատ ո՛ւր կոյս՝ կուսէ ծնեւ լոյն։
Ս՜ահն երկու մայր վանկք, եւ երկու կոյս վանկք, են գերահրաշ տառաջնեն ձեւք եւ այլք սոյնպիսիք·

Գուէճնէսն, որոյ երկու բառն, կամ բանն մեծեանց ի գիրս, կամ ի խօսս յարմար լինիցին· բայց ի մեկնութեան այլեւայլ· Ճ անն երկնային՝ եւ երկրային՝ Ջրային քն· աւեն ընծնիւ՝ եւ հովանու՝ մերայինքն։


Ս

Սկսանն ոչայց՝ միով ձայնիւ՝ հասարակ. աւսն խմա՝ և երթ նոյնոց՝ հաս արադ։ Թուղձնիս խաղն, է այն, յորս բանքն մի և նոյն շարադրի. բայց խմացուան այլ
խմնայէս, որպէսի են աղքա։

Սրէք սրէք՝ սրադէք ա րադ. փաւթուլք փաւլթոլ՝ հաստկք հատակ։

Նշէուհանն, է այն, որ 'ի միոյ իրէ կամ յատանաւորէ այլ խմն կերպ խմացուան երանի. որոյ և ա ասի Բեղէփհանը, յո, նմա նութե. ով աուբ-ծն, արեգակն, լուսն և այլ այնպիսի նմանուէքն ցուցանեն զանուան Քէ Տէն մերոյ։ Նուշէս ասացեալն, է ձև խմն. որ միոյ իրի մեկ նութին հարցաբանէ, և մի ամն պա֊ տասխանէ գիտելով, թէ է այսոց. կամ այնոց։ որպէսի է այս։ Ո՞ւ ես է այն, թէ յոչ ունի մարմինն հոգի. մեջ փո֊ րասխան լցեալ է օձ Է.քարբի. չունի լեզու եօթանասներկ զ՞նոյն գիտէ. յորժամ զգլուխն որ կարէս խօսի յայտ նէ։ Յաւելէլ և միոյն ասի հուասծա. յորոյ միջի մոզք գիտելի բանքն լինին



պաղա

դաղտնի՝ այսպէս․ երկոտասան թիւ՝ է
խորհրդաւոր․ որ էիցս հանրից՝ յաւէտ
փառաւոր։ Դոսն այլ ինն ձեւք տառաց
դարձակմանք․ որոց ասի ծագլուղ․ որով
վերաբերեն ինչ ինչ չափաբերականս
բանիւք այսպէս։ Դոհա զօրեղ՝ Դոհս
շուքեղ․ տեղ նոյնպ՝ սեղ ուժեղ։
Մ՚հա գէտն, որ ըստ տառադարձութեան
արհեստի գրի տեղ․ որով փոփոխի կ-
մացումն։ Նոյնպս գէսն, սեղ․ որ էր
ը առաջին նշանակութեան՝ վերս, որ լինի
հպարտ․ և զայլսն այսպէս խմն։
Հարց։ Մի՞րպիսի կերպիւ համեմատի
երաժշտութիւն չորից դլխաւոր գիտու-
թեանցն, զոր յառաջն ասացեր։
Պատ։ «Բնարական երգն, համեմատի
թուաբանութեան․ նախ՝ զի թուաբանն
ունի զոյգ՝ անզոյգ, մակեռակ, մակա-
քառեակն թիւ․ այսպէս և բնարն ձայ
նից, ոմն զիլ, ոմն բամբ, ոմն Էաղեայ,
ոմն Ըաղեայ՝ և ոմն Ճաղեայ․ Երկրա
չափն, ունի սկիզբն զկէտն, զգիծն,
զմակերևոյթն, զմարմինն, զդարե-


հասն

հատն, զԹիզն, զոտն, ոսկինքն, 'ի կար ճէն՝ յերկարն ժամանէ՝ և չափէ զեր կիր. այսպ և երաժշտական քնարի լարից ոմն կարճ, որ, Թոյլ. ոմն միջակ. և ոմն երկար, որ, պինդ։ Իսկ յատեղա բաշխութեն, զոր 'ի յատեղս բաշ_ ձունս, ցածունս, և միջինս. այսպ յե_ րաժշտութեա, զոր բարձր, սուր՝ և միջակ ձայնս. վէր համեմատի նմա։

Հարց։ Սերեմն եօԹն ազատական յար հեստս ես ունի ամեղի երաժշտութիւն։

Պատ. ՅեօԹանց աստիճանն, որ, Բներ_ Թօղն, հայի յուղղախօսութիւն խօսից արհեստին, ըստ որում. է արհեստ ու_ ղիղ խօսելոյ.

Ճարտարն, որ, ճարտասանն, խօսից զարդ արոյ, կամ յօրինելոյ բանս բարեյար մարս, ըստ որում. է արհեստ բարւոք ասելոյ։

Տրամաբանն, պատմէ զսահմանէ, զբա ժանմանէ, զձեռնարկութէ, ըստ որում. է գիտութի քաջ տրամաբանելոյ։

Թուաբանն, Թուելոյ, բարդելոյ, և բա



ժա

ժանելոյ զթիւս, որ որում է գիտուն թռչնոց։

Երկրաչափն, գիտէ չափել զհեռաւորութիւն, զմերձաւորութիւն լերանց, բլրոց, զբարձրութիւն, և զխորութիւն, որ որում է գիտուն չափուց, և համեմատութեան քանակութեանց։

Աստեղաբաշխն, գիտէ զընթացս, զժամանակս, զշրջմունս, զազդեցութիւն՝ և զայլ հանգամանս աստեղացն, որ որում պատմէ և ճառէ մտացն իմացմամբ միայն, և ոչ աստուածայինն օրհներգութեամբ. զի են սոքա միշտ անդադրական ձայնիւ։

Բայց երաժշտականքն գիտուն, ի մէջ ընդհանուր գիտութեանց ծանօթութեանց՝ զանազանիւք պանծայ մնկանունօք. երբեմն կոչի՝ երգ ցնծութեան. երբեմն, հրեշտակական զօրութեանց. երբեմն, աստուածայինն փառաց։ Օրհնութիւն է՝ երգ աստուածայինն փառացն, զորմէ ասի. Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան՝ և սերովբէքն կային շուրջ զնովաւ. վեց թևք միոյ՝ և վեց թևք միոյ



եր

երկուքն ծածկէին զերեսս իւրեանց,
և երկուքն, զոտս. և երկուքն թռու-
ցեալք. աղաղակէին մի առ մի՝ և ասէ-
ին. Սուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր զօրութեանց՝ լի՛ է
ամ̃ երկիր փառօք նր̃. եսայ. 6. 1։ Եւ ա-
մ̃ծայրն անհանգստանէին, ասէ. չորից
կենդանեացն էին մի մի ՚ի նոցանէ
վեց թեւք. շուրջ լցեալք աչօք. և ոչ հանգ-
չէին՝ ոչ զտիւ և ոչ զգիշեր՝ յասելոյ.
Սուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր ամ̃. յայտ. 4. 8։
Ուրեմն ցանկալի՛ է երաժշտականն գի-
տութիւն և միշտ գովելի հանրիցն գի-
տութեանց. զոր յօրինեալ սերովբէն հրա-
նիւթից՝ մատուցանեն փառս բարե-
բանականս։

Հարց. Ի՞նչ նմանութի՛ ունի երաժշտութ.
Պատ. Նմանի երաժշտութիւն ձայնի՛ և ո-
ղեացն. տոփին՝ և բանիցն. զի կարէ զն-
դանակս ձևափոխել զանազանս, ըստ յա-
րախականն, ՚ի խաղաղականն. և ՚ի պա-
տերազմականն. ուր երգն առ աղեքսանդ-
րիւ, և այլն։ Ո՛ այս օրինակ առ իմաս-
տասէրքն, թէ պակաս է բանն որ քնո-
րոցն,

րոցն, յորժամ զաստուածայինն երգեն զերգ. ուրախականսն, յորդորել զլսօղս. և տրտմականսն, յապաշխարութիւն ածել. երբեմն յաստուածայինն բորբոքել 'ի սէր:

Հարց: Որպիսի կերպիւ լինի մարդն քնար:

Պատ: Ահա փոխանակ փողքի փայտին, բերանն. լարից, ձայնն. շաղափից, ատամունքն. ներքին ցցոյ, թոքն. ագանակթոյ, լեզուն. մատանց շարժմանց, շրթունքն և այլք. յաղագս այսորիկ ասէ Ներսէսն Շնորհօք Հոգւոյն սրբոյ քնարերգն Աստուծոյ մարգարէն Դաւիթ, թէ Ծաղեայ սաղմոսարանաւ սաղմոս ասասցէք բեզ. Ծաղեայ, Ծ զօրութիւն հոգւոյն ասէ. է գիտնականին, և է կենդանականին: Ո՛ւ ի սպառումն երաժշտականին լրմամն ումն զօրութի. քանզի չէք ինչ ասէ, որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն, կամ 'ի տրտմութիւն, որպէս զերգոյն ձայն՝ որ թէ բան պատշաճին լինիցին:

Ո՛ երգս 'ի սրբէից՝ ուսեալ յօրինեմք. 'ի զանազան ձայնս՝ բերել նուագեմք:

Սահմանին յաղագս երաժշտութեան, թէ՛ զինչ է։
Հարց։ Զինչ է երաժշտութիւն։
Պատ։ Ներբէական սրբասացութիւն։
Հարց։ Զինչ է նիւթն երաժշտակա՛ն
նութեան։

Պատ։ Առաջին նիւթն, է միջնորդն ե-րաժշտութեան. երկրորդ նիւթն, են տառք համոյնք. զի գոն 'ի տասս եւ կիսա-ձայն, միջակաձայն, հաստատաձայն, սաստ-կաձայն, նրբաձայն եւ այլք. նոյնպէս գոն 'ի պղատոնականն քնարի հաստ, միջակ, նուրբ ձայնքն երաժշտականն։

Հարց։ Որպէս լինին՝ եւ գան այնպէս ըստ ասիցդ։

Պատ։ Ահա ա՞, բ՞, գ՞, դ՞. սոքա են բուն ձայնք. ունի եւ չորս սաստ այլս. ա՛, բ՛, գ՛, դ՛. չորս պատասխա-նողք այսպէս. ա՛, բ՛, գ՛, դ՛. եւ չորս սաստիկ, ՃՁ. Թիզ այսպէս. ա°, բ°, գ°, դ°. որք եղեն վերջասան կատա-րեալ ստեղծման. եւ ունին կողմունք, եւ կողմանց կողմունք, եւ պատասխանողք նմա որք են երկս տասնեակ, եւ մի վեց-եակ ըստ տուեալ մերոյ։

Մասնանք քնարի՝ են երիս տասնեակս յարմար է տաւիղս՝ բարդելով վեցեկս. Ծայրք։ Մորդիսն դրուեք են նոքա. Գլուխ։ Մրոց դրուեին, է երկարապէս. այսր համառօտութեան անպատշաճ համարելով չերգաք զայն. այժմ այսքան բնաւ, թէ նախանձ պարտ է երաժշտացն բանալ զկանոնսն, և ուսանիլ զայն ըստ ծիսայ նորին, որ է այսու օրինակաւ.



ընդհանուր եղանակաց սկզբըն, է այս
ու • որ է գուր, և ըստ յունացն խաչն •
և ա՟մ ձայնից նիւթն, են տառք ձայնա
ւորք • և ա՟մ իմացումն տառից են չորս,
թ՟, գիրն, հեգն, բանն, և իմացումն •
զի գիրն՝ մարմին • հեգն, բանն մեր •
բանն, հոգի • և իմացումն, միտքս մեր
ծածուկ՝ և գաղտնի։ Ո՛ ի զայսուէ
իմանեայ միտքս մեր զգըրելն, որ ձեռօք
գրէ • աչօք, տեսանէ • լեզուաւն, ըն-
թեռնու • ականջով, լսէ • և միտքն իմա
նայ • յաղագս որոյ նախ՝ զձայնս ուսա
նիմք • երկրորդ՝ զխազս • երրորդ՝ զհեգումն
նց ընդ թուով • և չորրորդ՝ զեղանակա-
ւորսն ընդ համայն պարագայիւքն է,
բաժշտուեց, որ ը՟ յունացն ասի Պրօզ՟
զոր սկիզբն առնել իմանան այսու օ-
րինակաւ։ ա՟ձ • բ՟ձ • գ՟ձ • դ՟ձ։ ա՟կ • բ՟կ • գ՟կ • դ՟կ։
Այսք են անձայնք՝ ը՟ յունաց՝ ամփոփա •
ռ, թէ չունելով՝ ոչ դոն գերակայ։
՜ ՛ ՞ ՟ ։ ՝ ՝ ՝ ° ՛ ՟ ։ Սօմա պնէ-
մա՝ մարմին անմարմին • մէջակէտ նշխաք՝
ահա երկուին։ ՟ ՟ • ալ։ մինն ՚ի վերբերելա-
կաց՝ է յետահընար • է և շուտաշրջօղ՝

բացարձակաբար․ Երկուքն նշանա-
կան՝ խազք՝ են ոչ մարմին․ այս են ին-
քեանց յինքեանս՝ և ոչ անմարմին։
2, 2․ 2․ 2․ 2։ 4․ 4․ 4․ 4․ 4։
Վիճակ են մարմինն՝ բաղձանց խազից՝ զա-
նազան․ որք ձայնաւորքին՝ յետ անմար-
մնոյ՝ անընման։ Իսկ սոցա տեսութիւն, է
կարի յոյժ բաղձալի․ սակայն առ այժմ
յայտնելոյ ոչ ունի տեղի․ և այսքան բաւ
է ասացեալ ուսցուք․ թէ որոյ հեղումն
յօրինին եղանակք տաղանց խազասացու-
թեան դիտաւ։ Եղանակն ընդհա-
նուր ձայնից սկիզբն է․ թէ յաձ են, թէ
'ի բաձ են և յայլոցն սկիզբն ձայնիցս, է
եղանակին թարց ելուէջ առել։ Իսկ երկ-
ամանակն, է՛'ի դիկ են միով սատիճանա-
բարձր սկզբնաւորութիւն, որ է դ՟կ․ յոր
մէ սկիզբն առել շարժէ զաձ, զդաձ, զդաձ
ը օրումք կրկինն դարձաւարձ առնլով
ը արտեսաւ լուացուցանէ զեղանակն․
նոյնպէս և զայլոցն յօրինեն և եթ ձայնից
աստիճանի զօրութեան, որք թուին հաշուեք
'ի թուաբանութեան նոյնպէս իմա յերաժշ-
տութեան․ եթէ որ կամենայ, կարող է։

Փա՛ռք անճառելի՛ ո͞ւ Երրորդութե.
և պատիւ յաւէտ՝ մի Ա͞ծու թե.
Ի Հայր և Որդի և Ի Ս͞Բ Հո գին.
այժմ և յարաժամ՝ և միշտ յաւիտեան:
Որ Հասոյց յաւուրս՝ զայս փոքրիկ մատեն:
որ Հարցասիրացն՝ պատասխանաւ բան.
յերաժշտութեն՝ գիտուԵց ուս ման.
կարի ցանկալի՝ Համառօտ կան:
Սա պարունակէ՛ զ°Հարցմունքն Հոգեկին.
Է՛ որով Հանկիրծ՝ ինչ ինչ յունական.
գուն ինչ ևս Հարցմունն՝ այն պարսկկըն.
որովք յարդարին՝ երգք երգողական:
Չայնք երաժշտացն՝ եղանակս կան.
Հինն երգողուԵցն՝ երաժշտա կան.
և Համայն գործիքն՝ երգեցողա կան.
բազմօրեայ բանին՝ գոն Հարց պատասխան:
Թէպէտ է կիսատ՝ բ͞ն արՀեստա կան.
Համառօտ գոլոյն՝ է խորթան՝ և բան.
եթէ ո͞ր կամի՝ տորոյն լերա կան.
տեսանես տերամբ՝ ի յօրս տպարանն.
[illegible] անարթունս յիշել՝ զդատաստանեան.
մեղթեամսիրելեցդ՝ զԳրիգորս կեսարեան
Ե Հարբք և եղբարբքս՝ Հոգևորական.
որ լիջեք յիշեալք՝ գոլք ևս անխափան: